

ԳՈՒԳԱՐՔԻ ԵՆԹԱՇՐՋԱՆ

Անցյալում եղել է Գուգարքի Տաշիր գավառի, ավելի ուշ՝ Բորչալուի, Լոռի-Փամբակի կազմում: Վերջին դարում հորջորջվել է Ղարաքիլիսա (Սև ժամ), 1935-ից՝ Կիրովականի, իսկ 1964-ից՝ Գուգարքի շրջան: Հարուստ է հին հուշարձաններով: Գիտական աշխարհում առանձնապես կարևորվում են Վանաձոր քաղաքի բրոնզեդարյան կենտրոնը, Քոսի ճոթեր, Թագավորանիստ էնեոլիթյան բնակատեղիները, Եղեգնուտի, Փառնակի, Լեռնապատի, Խնձորուտի բնակատեղիներն ու ամրոցները, Անտառուտի, Սարգահովտի, Փամբակի դամբարանադաշտերը:

Շրջանի միջնադարյան հուշարձանների խմբում շատ են գյուղատեղիները, ավերյալ բերդերն ու եկեղեցիները, պատմական գերեզմանոցները, խաչքարերը (Անտառուտ, Վահագնի), բայց սակավ են վիճագիր արձանագրությունները, որոնցից հայտնիները ներկայացվում են ստորև:

ՎԱՆԱՉՈՐ

Ոչ վաղ անցյալում կոչվում էր Կիրովական, ավելի վաղ, հավանաբար, ժե դարից հետո՝ Ղարաքիլիսա, սևագույն քարով եկեղեցու պատճառով: Թեմակալ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի բնորոշմամբ Ղարաքիլիսան «է լայնանիստ գիւղ..., դիրք տեղւոյն վայելուչ, բարեհամ և առողջարար..., օդն զովարար, և հողն արգաւանդ»:⁹⁴ Վանաձոր անունը կապված է ծորահովտում երբեմնի գոյություն ունեցող մենաստանի հետ, որը ժԹ դարի սկզբում արդեն ավերված էր:

Մշակութային հարուստ ժառանգության հնագույն շերտերը վկայում են, որ այս բնակավայրը խոշոր ու կարևոր կենտրոն է եղել առնվազն մ.թ.ա. II հազարամյակից: Ժդ. եղել է Կյուրիկյան թագավորության կազմի մեջ: Պահպանվող միջնադարյան հուշարձանները սակավ են, սակավ են նաև վիճագիր հիշատակագրությունները:

Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. Ըստ Ջալալյանցի, դեռևս հնում, գյուղի հյուսիսային եզրում, բլրի վրա «գոյր հոյակապ վանք յանուն սուրբ Աստուածածնի շքեղ կաթողիկէի» և այլ հարակից շինություններ, որոնք «1828 ամի տեառն ի սաստիկ յերկրաշարժութենէ ի միասին անկել հիմնովին կործանեցան. իսկ ի 1830 ամի աշխատասիրութեամբ պարոն Փիլումայ Թայիրեանց և արդեամբք հայ ազգի բնակչաց վերստին շինեցաւ կոփածոյ քարամբք նոր եկեղեցի ի վերայ չորից միաստանի քարեայ սեանց»:⁹⁵ Տասներկու նիստյա թմբուկով այս նոր եկեղեցու շինարարության համար Ջալալյանցին ևս վիճակված էր գումարներ հանգանակել Աղվանքի, Արցախի և Գանձակի հայերից: Այս իրողությունն են մատնանշում նաև եկեղեցու որմերի արձանագրությունները՝ անուն առ անուն հիշատակելով նվիրատուներին: Շինարարական ու բարեկարգման այս աշխատանքներին մասնակցություն են ցուցաբերել նաև կեսարացի, կարնեցի, թիֆլիսեցի, խոյեցի և այլ տեղերի հայերը: Աղոթարանի արևմտյան մուտքի ներսի մի հիշատակագրություն էլ մանրամասնում է, որ այն կառուցվել է ռուսական ցար Նիկոլայ Պավլովիչ կայսեր (Նիկոլայ I Ռոմանով 1796-1855 թթ.) և Ամենայն Հայոց Կաթողիկոս

⁹⁴ *Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանց*, ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփլիս, 1958, էջ 104-105:

⁹⁵ Նույն տեղում: